Հաստատում եմ՝
ԵՊՀ պրոռեկտոր
Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ
28.09.2021.

ԿԱՐԾԻՔ

Վարդիթեր Կամոյի Գրիգորյանի՝ «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգը XIX դ. 30–ական թթ. – XX դ. առաջին տասնամյակում» Է.00.01 – «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի 2021 թ. սեպտեմբերի 22 – ի նիստում (արձանագրություն թիվ 2) նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Ա. Ն. Հայրունին, Գ. Մ. Բաղալյանը, Վ. Ա. Հակոբյանը, Ք. Ժ. Յախշյանը, Կ. Ա. Եղիազարյանը, Մ. Ա. Մալխասյանը, Տ. Կ. Գևորգյանը, Տ. Հ. Ղանալանյանը և ուրիշներ:

1830–ական թթ. «Պոլոժենիե»–ի վերաբերյալ ուսումնասիրությունների առկայությունը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել թեմերի կառավարման խնդիրների մասին: Վ. Գրիգորյանի ատենախոսությունը Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառավարման պատմությանը նվիրված առաջին համապարփակ հետազոտությունն է: Աշխատանքի կարևոր առավելություններից է առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող սկզբնաղբյուրների հարուստ բազայի վրա հիմնված լինելը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից: Ընդհանուր ծավալը կազմում է 154 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը. ատենախոսն իրավացիորեն նշում է, որ Վիրահայոց թեմը Հայ առաքելական եկեղեցու խոշոր միավորներից էր և հարյուրամյակների ընթացքում այստեղ ստեղծված վիթխարի հոգևոր–մշակութային ժառանգությունը հայտնվել է կորստյան վտանգի առջև:

Ատենախոսության գիտական նորույթը՝ գնահատելի է մի քանի առումներով.

ա) ուսումնասիրվել է թեմական վարչական կառույցը կազմող մարմինների աշխատանքային մեխանիզմը,

բ) թեմական կառավարման կենտրոնական և տեղական վարչական մարմինների գործունեության քննման օրինակով վեր է հանվել ժամանակի բյուրոկրատիայի դրսևորումները հոգևոր վարչությունում,

գ) ներկայացվել են թեմական վարչական կյանքի խնդիրները, ինչպես նաև հոգևոր վարչությունում ընտրությունների անցկացման, ընտրական իրավունքի կիրառման և ժողովրդի՝ եկեղեցու կառավարմանն ունեցած մասնակցության ձևը:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կենտրոնական իշխանությունը», Վ. Գրիգորյանն անդրադառնում է 1836 թ. «Պոլոժենիե»–ի ընդունումից հետո Հայ եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կենտրոնական իշխանության ձևավորման գործընթացին, թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմնի՝ կոնսիստորիայի կառուցվածքին ու գործունեության շրջանակներին:

Հեղինակն ընդգծում է, որ Հայ առաքելական եկեղեցու թեմական կառավարման համակարգը վերակառուցվեց նույն սկզբունքներով, ինչ որ ռուսականը:

Երկրորդ գլխում՝«Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի փոխանորդությունները և գործակալությունները» մանրամասն ներկայացվում է թեմի եկեղեցական–վարչական բաժանումն ու կառավարման առանձնահատկությունները: Կարևոր է փոխանորդությունների ու գործակալությունների դերի պարզաբանումը:

Երրորդ գլխում ատենախոսն անդրադառնում է թեմի ծխական համայնքների կառավարմանը: Առկա խնդիրները դիտարկվում են Հայ առաքելական եկեղեցու այլ թեմերի հետ զուգահեռներ անցկացնելով: Ուշադրության է արժանացել վերահսկման մեխանիզմների արդյունավետության հարցը:

Չորրորդ գլուխը վերնագրված է «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառույցի խնդիրներն ու բարեկարգումը»:

XIX դ. վերջին երկու և XX դ. առաջին տասնամյակի Հայ առաքելական եկեղեցու շուրջ տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում ներկայացվել են թեմական վարչական կառույցի խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Իր ընդհանրացումները նա ի մի է բերել Եզրակացություններում՝ բյուրեղացված տեսքով:

Ատենախոսությունը զգալիորեն հարստացնում են հավելվածում տեղ գտած աղյուսակները:

Անկասկած, կատարվել է դրական ու գնահատելի աշխատանք: Դրանով հանդերձ, ատենախոսությունում նկատելի են նաև բացթողումներ, վրիպումներ, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև:

1. Ամբիոնի կարծիքով ավելի ճիշտ կլիներ ատենախոսության ժամանակագրական շրջանակը հասցնել մինչև 1918 թվականը:
2. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը բացի ռուսական եկեղեցուց համեմատություններ անցկացներ վրացական եկեղեցու հետ:
3. Առկա են որոշ տեխնիկական վրիպակներ: Տիտղոսաթերթի վրա «XIX դ. 30-ական թթ.»-ի վրա գրված է «XIX դ. 30-ական թ.»: Էջ 14-ում գրված է «Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միավորվելուց հետո», այնինչ ամբողջ Արևելյան Հայաստանը չի միացվել Ռուսական կայսրությանը: Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում տպարանները նշված են հրատարակության վայրից առաջ: Պարբերականների պարագայում նշված չեն հրատարակության վայրերը:

Այս ամենով հանդերձ, ամբիոնը գտնում է, որ Վ. Գրիգորյանն ընդհանուր առմամբ կատարել է լուրջ և գնահատելի աշխատանք, ամբողջովին լուսաբանելով Հայ Առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգը քննարկվող ժամանակաշրջանում:

Որոշեցին -ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Վարդիթեր Կամոյի Գրիգորյանի «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգը XIX դ. 30–ական թթ. – XX դ. առաջին տասնամյակում» վերտառությամբ ատենախոսությունը հաջողված, որոշակի պատմագիտական արժեք ունեցող ուսումնասիրություն է, որն օգնում է ամբողջական պատկերացում կազմել Վրաստանի և Իմերեթի թեմի, ընդհանրապես Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ Ռուսական կայսրության վարած քաղաքականության, ինչպես նաև ներեկեղեցական մի շարք խնդիրների վերաբերյալ:

բ) Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և հեղինակն էլ արժանի է իր հայցած Է.00.01 Հայոց պատմություն մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ
ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Պ.Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ**
Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏԱՐԱՊԵՏ՝ **Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

24.09.2021